

- 65 Այսպէս զամն ինչ քարոզելով
 ԶԱւագաց սիրտս բստանալով
 Ի սէր Ազգին վայելելով՝
 Վարէր նա կեանս յոյժ ապահով:
- 66 Բայց ո՛վ աստեացս այլայլութեան,
 Եւ ո՛վ մարդկան փոփոխութեան,
 Որք ոչ պահեն յերջանկութեան
 Ի ձեռք պահու զայր պիտեւան:
- 67 Քանզի ահա մինչդեռ ցրնծայր,
 Սարգիս ի սէր Ազգիս պայծառ,
 Անգէտք ոմանք աղմուկարար
 Նորոգ վըշտաց լինին պատճառ:
- 68 Նոքին համբուն էին յուզիչ,
 Յորս էր շամբուշ Յօհան սափուիչ,
 Տիւրիկեցի Մովսէս դբժրիչ,
 Եւ Մեծմատնեան է՛ այլք ամբօխիչ:
- 69 Որոց էր գլուխս սոն եւ քամակ
 Ոսկեմանքն կորաքամակ,
 Խեռ Մանուէլն յաւէտ համբակ
 Ի՛ ուղղասիրաց միշտ հակառակ:
- 70 Անուն սոցին էր աննըշան,
 Իսկ պաշտպանեալ կոյս Տաթեւեան,
 Երեւէին քաջ ախոյեան
 Խուժամբժից յաշըս միայն:
- 71 Զինչ եւ իցէ զօրրա քաղցրալից
 Սարգսի մերոյ անդորրալից,
 Զօրէն զեռնոց, բըզզաց, ճանճից
 Գործեն տաղտուկ եւ զըզուալից: